

քին: Այսպէս յաղթական զնույքով նա զէպի Եղիպտոս կարշաւ՝ ասնելով հետ մարմնացած ստատնային, որին կմարթեն ծանապարհին Ռամբէի և Լիւզայի մէջ: Ապա կահիրէ կգայ, ուր նոր դատատան կլինի նախկին դատատանից ազատ մնացած անհաւատներին համար. քրիստոնեաների մահմէդականների և հրէաների պատիժն այն կլինի, որ ականջների մէջ ծանր արծիճ, երկաթ կամ ապակի պէտք է ունենան՝ ամառը շոգից նեղուն և ձմեռը ջրախց. բայց ամէնից աւելի ծանր կերպով կպատժուին այն գրուգները, որոնք Համգէի հեռանալուց յետոյ անհաւատութեան մէջ են ընկել: Այդպիսով յաւիտեական երանութեան շրջան կսկսուի գրուգների համար: Աստուած կմնայ մարմնով հաւատացեալների հետ և կիշխէ կահիրէում. Համգէն կայսերական փառք ու պատուով կպսակուի իբրեւ ճշմարիտ Մեսիա. իսկ նորա շորս օգնականները թագաւորների նման կլինեն իւրոյ աշխարհ կպատեն, կենդանի մնացած անհաւատներին կհատորեն և իւրոյ հարստութիւնները կահիրէ կծողովին՝ ի վայելս գրուգների: Սոքա փառաւոր պալատներում կպարեն, իսկ մահմէդականները, քրիստոնեաներն ու հրէաները սոցա անվարձ ծառաները կլինեն. նոցա մարմնից սարսափելի վարշահատութիւն կբուրէ, բայց միայն իրենց համար զգալի կլինի՝ ոչ գրուգների: Սոցանից իւրաքանչիւրը 120 տարի կպարէ, առանց իւր ուժերը կորցնելու. ապա մի քաղցր քուն կզայ վերան, և այդ միջոցին նորա հոգին առանց որ և է ցաւի կփոխադրուի մի ուրիշ նոր ծրնուող գրուգի մարմնի մէջ: Այսպէս յաւիտեական կերպով կշարունակուի լիէ նոցա երջանիկ՝ և լիէ անհաւատների տաժանելի կեանքը:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Օգոստոս 16-ին Մոսկուայում շատ փառաւոր հանգիստով նոցին Մեծութեանց Օգոստոսիա Վայսեր և Վայսրուհու ներկայութեամբ՝ կատարուեցաւ յանուն Ազգքսանդր Բ. Վայսեր կան.

զնաճ հոյակապ արձանի բացումը. Օրհնութեան կարգը կատարում էր Մոսկուայի մետրոպոլիտ Սրբ. Վլադիմիր, որ և հանդիսից առաջ պատարազ մատոյց Ուսպենսկի Մայր տաճարում Արձանի բացման ներկոյ լինելու համար ժողովուած էին բազմաթիւ իշխանական և բարձրաստիճան անձինք, այլ և Ռուսաստանի իւրոյ մեծ քաղաքների քաղաքալուսները: Ազգքսանդր Վայսեր համար կանգնած արձանի բացումը մի պարզ հանգէս չէր միայն, այլ երախտագիտութեան և յարգանաց այն հարկը, որ ժամանակակից Ռուսաստանն իւր Ահհայակետով ընծայում է հանգուցեալ Ազգքսանդր Բ. ի մեծամեծ բարենորոգումներով անմահացած թագաւորութեան յիշատակին. խոստովանում նոցա բարերար ազգացութիւնը ստրկական փիճակից ելած և արդար օրէքների պաշտպանութեան ներքոյ մտած ժողովրդի վերաւ խոստանում ընթանալ այսուհետեւ յառաջագիմութեան այն լուսաւոր շաւղով, որ գծել է բարեյիշատակ Ազգքսանդր: Սոյն մեծ հանդիսի առթիւ Թագաւոր Վայսրը բարեհաճեց ս. Անդրէասի ամենաբարձր շքանշանը շնորհել Սրբ. Սինոդի օրեր—պրոկուրոր Պորեգոնոսցէվին—Հանդիսի յաջորդ օրը, օգոստոսի 17-ին, նոցին Վայսերական Մեծութեանց ներկայութեամբ հիմը դրուեցաւ Պետրուսից թանգարանի յանուն Ազգքսանդր Գ. Վայսեր. իսկ 18-ին Մոսկուայի մի նոր բարեգործական հաստատութեան՝ աղքատաց ապաստանարանի հիմը, նոյն օրը Օգոստոսիա հիւրերը հելլէնական Թագուհու և Թագաժառանգի և ուրիշ բարձրաստիճան անձանց ուղեկցութեամբ այցելեցին Տրոյից—Սերգիէվսկի վանքը. իսկ օգոստոս 19-ին ուղեորուեցան զէպի հարաւ և 21-ին հասան Սեաստոպոլ, ուր փառաւոր ընդունելութիւն և ծովահանգէս տեղի ունեցաւ.

— Բուլղարիոյ իշխանի զէպի Ռուսաստան կատարած ճանապարհորդութեան մի տեսակ շարունակութիւնը եղաւ Չերնոգորիայի իշխանին այցելելը. երկու իշխանները հանգիսաւոր ճաշկերոյթի միջոցին կենաց բաժանների առթիւ ճառեր արտասանեցին, տեղական մամուլն առաջնորդող յօդուածներ հրատարակեց, որոնք իւրոյ պատում են Բուլղանեան թերակղզւոյ այսուան ազգերի եղբայրական միութեան և Ռուսաստանի հօր հովանու ներքոյ համերաշխ գործունեութեան գաղափարի շուրջը.

— Օգոստոսի 9-ին Պետերբուրգի Հոգեւոր ճեմարանի հանգիսաւորում Սինոդի օրեր—պրոկուրոր Պորեգոնոսցէվի ցանկութեամբ հոգեւոր նուագահանգէս տրուեցաւ ի պատիւ Անդրիայից եկած մի քանի նշանաւոր հիւրերի, գաղափար տալու համար նոցա ուսաց եկեղ. երաժշտութեան մասին: Այդ հիւրերն էին Նիկէստլի գուբար իւր ամուսնոյ հետ, Օքսֆորդի համալսարանի ուսուցչական Բիրկլէկ, որ յայտնի է զէպի օրթոդոքս եկեղեցին

առած համակրութեամբ և սորա ու անգլիկան եկեղեցւոյ մերձեցման գաղափարին նուիրած կարեւոր յօգուածներով, եկեղեցական երաժշտութեան մասնագէտ և Լոնդոնի եկեղեցական—երաժշտական ընկերութեանց մերահսկող Պէրրոտ, Նուագահանգէսին ներկայ էին մի շարք բարձրաստիճան հոգևորական և աշխարհական անձինք, որոնք, ինչպէս և հիւրերը, շատ գոհ մնացին ու ցանկութիւն յայտնեցին այսպիսի Նուագահանգէսներ յաճախ կրկնուած տեսնել:

— Ռուսաց գրեթէ բոլոր թեմերում հոգաբարձութիւններ կան եկեղեցական դասի ազգայնորէն դրամական օգնութիւն հասցնելու նպատակով. Перк. Вѣстникъ թերթի թղթակիցը շատ անշան համարելով այդ հոգաբարձութիւններից ստացած նպաստը՝ իրեն աւելի արդիւնաւէտ միջոց ցոյց է տալիս այն, որ հաստատուած է պետութեան ընդհանուր օրէնսգրքի նոյն իսկ առաջին խմբագրութեան մէջ, բայց մինչև այժմ շատ քիչ է գործ դրուել: «Բոլոր եկեղեցիներում բացի վանքերից, պէտք է զանձանկներ սահմանուին, նուէրներ ժողովելու համար ի նպաստ հոգևորականութեան խնամատարութեան գործի: Թղթակցի ասելով այս միջոցը շատ տեղեր աչքի ընկնող արդիւնքներ է ցոյց տուել:— Մեզանում զանձանակ շրջեցնելու արդիւնքը հարկաւ շատ քիչ կլինէր, բայց ժամանակ է հոգևորական դասի որբերին և այրիներին խնամելու մասին հոգալ և լուրջ միջոց ձեռք առնել:

— Տիխիսի Ռուսաց հոգևոր դպրոցի տեսուչ Սէրաֆիմ վարդապետը յուլիսի 11-ին Բարձր. հաստատութեամբ Օստրոգի թեմի եպիսկոպոս ընտրուեցաւ և օգոստոս 23-ին ձեռնադրուեցաւ Պետերբուրգի Ալէքսանդրո—Նէվսկիյ վանքում, Սրբ. Պալլադիյ մետրոպոլիտի:

— Кавказъ պաշտօնական թերթի և ուրիշ թերթերի մէջ տպուած է Վրաստանի էկզարխ Սրբ. Ֆլավեան արքեպիսկոպոսի շրջաբերականը, որով նա հրաւիրում է օրթոդոքս ժողովրդին ընդհանուր առատաձեռն նուիրարեութիւններով օժանդակել վերանորոգելու Մցխէթի երկօտասան առաքելոց կամ Սվէտի—Յիովելի (Սիւն Կենդանարարին) կոչուած ամենահին և փառահեղ տաճարը, Այդ տաճարումն է պահուում Տիրոջ անկար պատմութեան, որի համառօտ աւանդութիւնը մէջ է բերում շրջաբերականը, ապա նկարագրում է շինուածքի նորոգութեան կարօտ մասերը և յայտնում, որ այդ նպատակի համար պէտք եղած 200,000 ռուբլի դրամը Բարձր. հաճութեամբ պէտք է ձեռք բերուի ամբողջ Ռուսաստանում ժողովարարութիւն անելով, ուստի և Սրբ. Էկզարխը ջնքմաքին խօսքերով հրաւեր է կարգում բոլոր դասակարգերի հաւատացեալներին՝ շինայել իրենց լուսման օրթոդոքս եկե-

ղեցւոյ պարծանք, 16 դարերի հնութեան ներկայացուցիչ այդ պատկառելի արձանն իրեն վայելուչ փիճակի մէջ դնելու:

— Սրբ. Սինոդը մի կանոնադրութիւն է կազմել Խալմ—Վարչապետան թեմի օրթոդոքս եկեղեցւոյ դիրքը դարձած ունիասներին համար, որը հաստատուելով Թագաւոր Վայսրն աւելացրել է հետեւեալ խօսքերը. «Յոյս ունիմ որ այս կանոնները բաւականութիւն կտան բոլոր իրաւացի պահանջներին և առաջը կառնեն ամէն տեսակ շփոթութեան, որ ցանուած են ժողովրդի մէջ Ռուսաստանի և օրթոդոքսութեան թշնամիները, Լեհացիք թող անարգել պաշտեն Տէր Աստուծուն շատինական ծէսով, իսկ ռուս մարդիկ ի սկզբանէ անտի եղել են և կլինեն օրթոդոքս և Թագաւորի ու Թագուհու հետ ամէն բանից աւելի պատուում և սիրում են մայրենի օրթոդոքս եկեղեցին»:

— Սրբ. Սինոդի ուսումնարանական խորհուրդը որոշել է թոյլ տալ, որ Ռուսաց եկեղեցական—ծիսական ուսումնարանների համար այլազաւաններն ևս հոգաբարձու ընտրուին: Երեսնին, որ այս միջոցը կօգնէ եկեղեցական դպրոցը գրաւիչ և մատչելի դարձնելու այլազաւանների համար, այն տեղերում մանաւանդ, ուր պետական կամ քաղաքային դպրոցներ չկան:

— Թագաւոր Վայսրը հաճել է յունիս 4-ին Բարձր. հաստատութեամբ վաւերացնել Պետական խորհուրդի որոշումը Վլադիվատոկի անկախ թեմ կազմելու նկատմամբ, որի մէջ մտնում են Վամշատկայի թեմի մի քանի տեղերը՝ Վլադիվատոկ քաղաքը, Սախալին կղզին և ծովափնեայ մասերը, նոր թեմի առաջնորդը պէտք է կոչուի՝ Վլադիվատոկի և Վամշատկայի եպիսկոպոս, իսկ նախկին Վամշատկայի թեմը Բլագովէշչենսկիյ թեմ պէտք է անուանուի: Երեսնին, որ այս բարեփոխութիւնը միջոց պէտք է տայ եկեղեցւոյ ազդեցութիւնը զօրացնելու Սիբիրիայի հեռաւոր կողմերում:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Իտալիոյ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները՝ խափանելու կամ չափի տակ դնելու համար այն ընկերութիւնները և հաստատութիւնները, որոնց մէջ կաթոլիկ կղերը հակապետական ոգի է սնուցանում՝ ստիպել են պապին մի նոր շրջաբերական ուղղել Իտալական ժողովրդի և հոգևորականութեան անունով, նա աշխատում է այստեղ ցոյց տալ, որ կաթոլիկ կղերը բոլորովին անմասն է և անմեղ վերջին խռովութեանց նկատմամբ, բացառութեամբ է խափանուած հաստատութիւնների կարեւորութիւնն ու օգուտը և կառավարութեան բռնած ընթացքից մեծամեծ չարիք է գուշակում: Էտալացի կաթոլիկներն, ասում է նա՝ իրենց կրօ-

նի անփոփոխելի և հանրաժանօթ սկզբունքների շնորհիւ խոյս են տալիս պետական իշխանութեան դէմ յարուցած ամէն տեսակ խռովութիւններից և ապստամբութիւնից . Բայց հարկաւ իբրեւ կամօք պէտք է ցանկանաւ իրենց հովուապետին վերադարձնել այն անհրաժեշտ անկախութիւնն ու լիազօրութիւնը, առանց որի կամօքիկ եկեղեցին անկախ և ազատ լինել չէ կարող: Այս կետում նոցա զգացումները ոչ սպառնալիքներով և ոչ բռնութեամբ փոխել չի կարելի նոքա համակերպում են իրերի ներկայ գրութեանը, սակայն քանի որ սորա նպատակը պապականութիւնը ծնշելն է և հիմքը բոլոր հակակրօնական և աղանդաւոր տարրերի դաւակցութիւնը՝ չեն կարող իրերի այդ գրութեան իրենց հաւանութիւնն ու օգնութիւնը ընծայել, առանց մեղանշելու ամենասուրբ պատականութեանց դէմ: Պապի շրջափրականն առհասարակ որոշում է Խաւիւյ շահերը թագաւորութեան շահերից և կրկին այն զաղափարն է արծարծում, որ եթէ գերիշխանութիւնը պապի ձեռքն անցնէր, բոլոր ցաւերը մի անգամից դարման կգտնէին, բայց նա կարելի և օրինաւոր է համարում համեկ այդ նպատակին եկեղեցական և հասարակական ասպարիղի վերայ աշխատելով առանց քաղաքականութեան մէջ խռնուելու, ուստի և անմիտ զրպարտութիւն է անուանում կամօքիկների իբրեւ հայրենիքի թշնամիների վերայ դրած մեղադրանքը:

—Մի ուրիշ շրջափերական ուղղել է Լևոն պապը Շոտլանդիոյ եպիսկոպոսներին, որով խրատներ եւ տալիս և միջոցներ է առաջարկում կրկին անգլիական ժողովրդին Հռոմէական եկեղեցւոյ գիրկը զրաւելու համար. նորա գլխաւոր պահանջն է կաթոլիկական դպրոցների բարեկարգութիւնը, որոնք «ոչ մի բանով յետ չպէտք է մնան միւսներէց. որովհետեւ պէտք չէ թոյլ տալ, որ կաթոլիկ երիտասարդ սերունդը գիտութեան և նուրբ կրթութեան աւելի պակաս պաշար ունենայ. քրիստոնէական հաւատը միշտ գնահատել է այդ բաներն իբրեւ խիստ յարգելի օժանդակ միջոցներ, որոնք նորան պաշտպանում և զարգն են կազմում»։ Իբրեւ երկրորդ կարեւոր կէտ յառաջ է բերում նա. «Պէտք է առանձնապէս հոգեւորականութեան կրթութեան համար հոգ տանել, որ այսօր իւր կոչման արժանապէս ծառայել կարող է միայն այն դէպքում, երբ ամէն կերպ աչքի է բնկնում իւր կրթութեամբն ու մտաւոր զարգացմամբ»։ Արորոք յորդորը ուղղուած է կաթոլիկ քաղաքացիներին, «որ նոքա իրենց քաղաքացիական առաքինութիւններով նպաստեն իբրեւ մի բոլորովին անհիմն զրպարտութիւն ներկայացնելու այն առարկութիւնը, թէ կաթոլիկական կրօնը թշնամի է պետութեան և ապացուցանեն ընդհակառակն, որ պետութիւնն ա-

ւելի լաւ նեցուկ չունի իւր արժանապատուութիւնն
ու թարեկեցութիւնը պաշտպանելու համար:

— Ինչպէս յայանի է, պապական եկեղեցին աշխատելով մի կողմից զանազան զիջումներով օտար եկեղեցիներն միացնել իւր հետ՝ միւս կողմից ո՛չ մի ջանք չէ խնայում արդէն միացածներին խմորելու լատինականութեամբ: Պապը վերջնականապէս հաստատել է Լեմբերգի գաւառական ժողովի դեռ 1891 թ.-ին կայացրած վճիռը, որով այդ լեմբի կաթողիկէ եկեղեցւոյ հետ միացած օրթոդոքսները պէտք է իրենց գրեթէ բոլոր նախկին ձէսերն ու սովորութիւնները թողնեն և լատինականը յանձն առնեն. Արգելուում է մինչև անգամ նախկին ուխտատեղիները գնալը, յունական ձևի խաչեր շինելը, հոգևորականների մօրուք պահելը և այլն:

— ԼՎՈՐԸՄՈՒ ՕԳՈՍՏՈՍ Ծ-ին վախճանուեցաւ Գալիցիայի մետրոպոլիտ Սիլվեստր Սեմերատովիչը, որ յայտնի էր օրթոդոքս ազգաբանութեան մէջ կաթողիկոսութիւնը զօրացնելու համար արած քանքերով։ Նորա իշխանութեան օրով, 1886 թ.-ից ի վեր, օրթոդոքս—կաթողիկ միացեալ եկեղեցին կորցրել է իւր յունական առանձնայատկութիւններից շատերը և լատինացել, եռանդուն մասնակցութիւն է ունեցել նա լեհացոց վարած հակառուսական քաղաքականութեան մէջ և ոչ մի առիթ ձեռքից չէ թողել ուսական ազդեցութիւնը Գալիցիայի ցեղակից և դաւանակից ընտերիշների վերայ ջլատելու կամ չէղբքացնելու, որի համար և ստացել էր կարգիմալութեան բարձր աստիճանը։

— Յայտնի է թէ ներկայ պապը որչափ ջանքեր է գործ գնում ի միջի այլոց արեւելքը՝ Աւրասորիայի նահանգներից սկսած մինչև Ասիոյ խորքերը, կաթողիկե եկեղեցւոյ համար դրաւելու: Աերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ կաթողիկական պրոպագանդան զգալի յաջողութիւններ է ունեցել, մանաւանդ մի քանի օրթոդոքս երկրներում: Ինչպէս Բուսինիա, Յունաստան, Բոսնիա, Չերնոգորիա, այլ և Եգիպտոսում՝ ղպաինների մէջ: Գլխաւոր գործիչներն այս բոլոր տեղերում հարկաւ եզուիտներն են, որոնք երբեմն չեն քաշուում նշն իսկ մեծամեծ գումարներ զոհելուց գործունէութեան նոր ասպարէզներ ձեռք բերելու համար: Իսկ ամբողջ պրոպագանդայի եռանդուն ղեկավարն է Աղուստովսկի կարգինայր:

— Պապը մի խիստ բանազրանք է արձակել նախկին կաթոլիկ երէց ընհացի Առդոմսկու դէմ, որ մի քանի ամիս առաջ, Ամերիկայի հին կաթոլիկներին համար եպիսկոպոս ձեռնադրուելով՝ Զիկագո գնաց և այնտեղ բաւական ընդարձակ գործունէութիւն է սկսել՝ հին-կաթոլիկ համայնքը զօրացնելու և Հռոմէական եկեղեցուց դժգոհներին իւր շուրջը ժողովելու համար։ Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հին—կաթոլիկները շատ տեղեր

զգալի յաջողութիւն են ունենում:— Հոռմէական եկեղեցին մի կողմից նորանոր նուաճումներ է անում: միւս կողմից կորցնում է իւր զաւակներին: Այսպէս՝ ի յիշատակ Սաւանարոյլայի յորիւնների Հոռմում մի միութիւն է կազմուել նորա անուամբ: որի նպատակն է եկեղեցական վերանորոգութեան զազաւարն արծարծել: Նոյն նպատակով Ֆրանսիայում սկսուած շարժումն արդէն զգալի յառաջագիմութիւն է արել և ծանր հոգսեր է պատճառում կաթողիկոսական բարձր շրջաններին: որոնք աշխատում են ի միջի այլոց մամուլի միջոցաւ ձգել այդ շարժման վարկը: Բայց ի զոր:

— Յուլիսի 30-ին Գերմանական Վայսրուհու եղբայր Շլեզվիգ—Հոլշտայնի դուքս Գիւնթեր պրուսական Վիլհելմայում Սաքսէն—Վորտուք—Գոթայի իշխանուհու հետ, որ կաթողիկ եկեղեցուն է պատկանում: Այս եկեղեցին խառն ամուսնութիւնների համար պակաս օրհնել թողլատրում է միայն այն դէպքում: երբ համաձայնութիւն է կայացել որդիներին կաթողիկ մկրտելու: Գիւնթեր դուքսը հարկաւ այդպիսի պայման լանձն չէր առել, և այդ տեղից յառաջ եկած զժուարտութեանը վերջ տրուեցաւ նորանով: որ նորապսակ զոյգը կաթողիկ քահանայի և 2 վկաների յերկայումս թաւանց որ և է արարողութեան: իւր «այո»-ն ասաց: և այդպիսով պսակը եկեղեցական տեսակէտից վաւերական ճանաչուեցաւ: Սակայն այժմ Վատիկանի պաշտօնական թերթը՝ ուրիշ կաթողիկոսական լրագիրներ խոստիւ գատապարտում են այդ զինքով: որով Վիլհելմայի արքեպիսկոպոսն, ստիպուած եղաւ կրկին քննութեան ենթարկել պսակող քահանայի արարքը և հաստատելով որ նա յիրաւի իւր իրաւանց սահմանից ելեր է՝ հրապարակաւ զժողովութիւն յայտնեց:

ՆԵՍՏՈՐԱԿԱՆՆԵՐ.

Ռուսաց եկեղեցական մամուլի մէջ նորանոր յօդուածներ և ուսումնասիրութիւններ են լոյս տեսնում շարունակ՝ նորագործ նեստորականների անցեալին և ներկային վերաբերեալ: որոնցից կարելի է մի շարք հետաքրքրական տեղեկութիւններ քաղել: Այսպէս՝ Церк. Вѣстник թերթի 32-րդ հ.-ում մի համառօտ ակնարկով ցոյց է տուած: թէ ինչպիսի կարեւոր պատմական յիշատակարաններ են գտնուել Սեմիրէչեան նահանգում: որոնցից երեւում է որ Ժ.Վ. և Ժ.Վ. դարերում նեստորականները Միջին Ասիոյ ուրիշ հեռաւոր նահանգներին գտաւ այգտեղ ևս մի համայնք էին հաստատել: Այդ յիշատակարանները տապանադրեր են՝ Պիշպիկի գերեզմանատան քարերի վերայ: ասորական տառերով և ասորական, թուրքերէն բառեր խառն: լեզուով արձանագրած: Թրքական անուններից և ուրիշ նշաններից պէտք է եզրակացնել, որ նոցա

արձանագրող համայնքը թրքական ծագումն է ունեցել: Կոտ 300 անուն են յիշուում տապանադրերի մէջ: որոնց թուում բաւականաչափ հոգեւորականներ: յիշուում է ի միջի այլոց հայ եպիսկոպոս Իւստան (Յովհանն), որ կին և աղջիկ էլ է ունեցել: հետեւաբար բարձր կարգի եկեղեցականներ կարող էին նաև ամուսնացած լինել: Ուրիշ յիշատակարաններ ցոյց են տալիս: որ կային սոցա մէջ մատաղահասակ եկեղեցականներ ևս: և որ աստիճան ստանալուց յետոյ ամուսնանալ չէր արգելուում: Ո՛չ մի տապանագրի մէջ հալածանքների մասին յիշատակութիւն չկայ: ուրեմն թուրք իշխանաւորներն իրենց նեստորական հպատակներին չէին նեղում: Այն հանգամանքը, որ համեմատաբար մեծ քանակութեամբ տապանագրեր են մնացել 1838—1839 թ.-ներից և որ այդ թ.-ներից յետոյ նորա շատ արագ կերպով նուազում և շուտով զազարում են՝ ենթադրել է տալիս: որ այստեղի նեստորական համայնքը՝ եթէ ոչ քնալինջ լինելուն: գոնէ մեծապէս վնասուելուն պատճառ եղել է նոյն թ.-ներին տեղի ունեցած մեծ ժամախառն: Սակայն առհասարակ Միջին Ասիոյ նեստորականութեան անկման և հարեան մահմեդական ժողովուրդների հետ ձուլուելուն բուն ժամանակամիջոցը պէտք է համարուի Լէնկթեմուրի իշխանութեան շրջանը: երբ մոնղոլական տարրն այնչափ զօրացաւ և քրիստոնեայ ազգերի դէմ վարած կոխների մէջ աշխարհութիւնների հանդիպելով՝ բռնաւորը իւր բոլոր զայրոյթն ու շարութիւնը հպատակ քրիստոնեաների գլխին թափեց: Յամենայն դէպս Ժ.Վ. դարի վերջերից ի վեր ոչ մի յիշատակութիւն չեն գտնում այլ ևս այն կողմերի նեստորականների մասին:

Նոյն թերթի 34 հ.-ում մի քանի ծանօթութիւններ են հաղորդած ժամանակակից նեստորականների եկեղեցական կարգերի և հաւատալիքների վերաբերեալ: Որմիայ նազուլայ զաւառի Աէսսի գիւղում գտնուում է աստուածայնչի ասորերէն մի շատ հին և պատուական ձեռագիր: որ տեղացիների կարծիքով նոյն իսկ Բ. դարում է գրած և մեծ յարգ է վայելում նոցա կողմից: Յուդայի Յովհաննու թղթերը և Յայտնութիւնը պակաս են այդ ձեռագրի մէջ: որ յիրաւի նորա հնութեան նշան կարող է համարուել: Բայց ոչ հարկաւ այդպիսի առասպելական հնութեան: Իրենք ասորիները բողոքականների տպած աստուածաշունչներ են գործածում: որոնց մէջ նոյնպէս զանազան տարբերութիւններ կան մեր սոփորական օրինակների համեմատութեամբ: Միւս եկեղեցական զբբերն են Տախտ: Խոյրա: որոնք մեր մաշտոցի և ժամագրքի տեղն են բռնում: Մխարիմիստ: որ պարունակում է դաւանական գրուածներ և Պեղիկիստ: որ կանոնների մի ընդարձակ ժողովածու է: Սակայն նեստորական-

ների մէջ շատ քչերը կան, որոնք այդ գրքերից բան են հասկանում և փոքր ի շատէ որոշ գաղափար ունին իրենց հաւատի մասին, նոցա հաւատոյ հանգանակը իմաստի կողմից գրեթէ տարբերութիւն չունի ամենեւին ընդհանուր եկեղեցւոյ գաւառութիւնից, «Ասան մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացեալ ի Հոգւոյն Սրբոյ և եղեալ մարդ ընդ վշտօք՝ յղացեալ և ծընեալ ի կուսէն Մարիամայ» — այս խօսքերն են մարդեղութեան խորհուրդը բացատրում, որոնք բոլորովին ուղղափառ մտքով կարող են հասկացուիլ: Գլխաւոր տարբերութիւնը ուղղափառ գաւառութիւնից, որի մասին իրենք նեստորականները գիտակցութիւն ունին, այն է որ նոքա շարունակում են ս. Վոյսին Քրիստոսածին անուանել և յիշեցնում են դորանով՝ նեստորի Հին վարդապետութիւնը, որի համար և վկայութիւններ են բերում նորա, նորա ուսուցիչ Գիողորի և Թեոփորի և պարսկական եկեղեցին կազմակերպող հայրերի գրուածներէց, նեստորականները սրբոց պատկերներ չունին իրենց եկեղեցիների մէջ և միայն ս. խաչի և աւետարանի առաջ են խաչ հանում: Սուրբերի յիշատակը տօնում են, բայց նոցա չեն դիմում աղօթքով իրրեւ բարեխօսների, որովհետեւ միակ բարեխօս ընդունում են Յիսուս Քրիստոսին, Մասունքներին յարգանք մատուցանում են և սուրբ տեղերում մոմ ձրագ վառում:

Աւելի ընդարձակ տեղեկութիւններ գտնում ենք Христианское Чтение ամսագրութի (օգոստոս հ.) «Արեւելքի կաթողիկոսը և նորա ժողովուրդը» վերնագրով յօդուածի մէջ, որ քաղուածք է նոյնանուն անգլիերէն գրքից, Այստեղ ասորի — նեստորական ժողովուրդը դանազան տեսակէտներով մի քանի մասերի է բաժանած. նախ ժ. Զ. գարում պատրիարքական իշխանութիւնը բաժանուել է երկու տեղ, Մոսուլի շրջակայ գաղտնավայրի ժողովուրդն իրրեւ եկեղեցական պետ ընդունում է «Մար-Էլ-լիա»-ին, որ «Բարեկոնի պատրիարք» տիտղոսն է կրում, իսկ գէպի հիւսիս տարածուած լեռնակողմի ժողովուրդն ընդունում է «Մար-Շիմոն»-ի իշխանութիւնը, որ կրում է «Արեւելքի պատրիարք» տիտղոսը, Այժմ երբ խօսք է լինում նեստորականների մասին՝ սովորաբար վերջիներս են են հասկացում, որովհետեւ առաջինները միացած են արդէն կաթողիկ եկեղեցւոյ հետ և կոչւում են «Բաղդէական Ունիայ», Մար-Շիմոնի ժողովուրդի մի մասը Քուրդիստանի լեռներում է բնակուում, տաճկաց իշխանութեան ներքոյ, միւս մասը սահմանակից Պարսկաստանում, գլխաւորապէս Ուրմիոյ լճին կից հարթավայրի վերայ, Տաճկահայաստան նեստորականները վերջապէս երկու տարբեր դասակարգերից են բաղկացած. Հաքքիարի գաւառի ամուր լեռանց բնակիչները աշիրքներ են, կէս ան-

կախ դիրք ունին և շրջապատող քուրդերի նման ազատ կեանք են վարում, իսկ ցած տեղերում ապրող ռայան ամենաողորմելի վիճակի մէջ է՝ ստրուկ գրեթէ թուրք իշխանաւորների և քուրդ կաշուածատերների, — Մար — Շիմոնի ամօռանիստ Առջանիս գիւղը գտնուում է 7000 ոտք բարձրութիւն ունենող մի խիստ գեղեցիկ լեռնադաշտակի վերայ, որի երկու կողմի խոր ձորերի միջով հոսող վտակները Զաւ գետն են թափւում, Գիւղի ծայրին ցածր մի ժայռի վերայ գտնուում է պատրիարքական եկեղեցին՝ մի պարզ շինուածք, որի շուրջը հանգչում են երկար դարերէ ի վեր այս լեռանց զաւակների հովիւները, Աթուղիկոսի բնակարանը կամ խուցը գիւղի միւս տներից տարբերուում է միայն նորանով, որ աշտարակ ունի, նորա նիստուկացն առհասարակ շատ պարզ է և անշուք, Հատ սակաւ անգամ լացակայում է նա աթուղից, կառավարութեան կեդրոնը, Զուլամերի, գնալու կամ իւր հօտին այցելելու համար, այլ սովորաբար տանը նստած ընդունում է ամէն տեսակ խնդրատուների և հիւրերի, Այժմեան Մար — Շիմոնը մի շատ խելացի և շրջահայաց անձն է, որ գիտէ յարմարուել շրջապատող հանգամանքներին և ժամանակի պահանջներին, նա սպիտակահեր է արդէն, թէեւ մօրուքը բոլորովին սև, հագնում է մեզ ծանօթ քրդական հագուստ և կրում է սև մետաքսէ փաթոյթով փեղդոյ, որ միայն եկեղեցւումն է հանում, Սենեակում նա ծաղապատիկ նստած է լինում գորգի վերայ, բայց պահում է մի քանի լազկաթոռներ եւրոպացի այցելուների համար, Աթուղիկոսին շրջապատում են իւր ազգականները, որոնց խորհրդակցութեամբ վճռուում են բոլոր կարեւոր խնդիրները, նոցանից իւրաքանչիւրն իւր որոշ տեղն ու աստիճանն ունի, որ և ամենայն նախանձախնդրութեամբ պահպանուում է, նոքա ազատ են հասարակ աշխատանքից և կաթուղիկոսական գործակալների դեր են կատարում՝ այլեայլ եկեղեցական և քաղաքական գործեր կարգադրելու համար ներսն ու դուրսը, Երբեմն նոքա որսի են գնում կամ զբաղւում են զինուորական վարժութիւններ աւելով ձիու վերայ, Գլխաւոր զբաղմունքներից մէկն է նոյնպէս շախմատի խաղը, որի մէջ վարժ են կաթուղիկոսից սկսած նորա տան բոլոր անդամները: Հետաքրքրական է, որ կաթուղիկոսի անմիջական շրջապատողների մէջ լինում է միշտ մի խեղկատակ ևս, որի կոչումն է զուարթ տրամադրութիւն պահպանել այս ծանր հոգսերի ներքոյ ձրենշուած շրջանում: — Աթուղիկոսից յետոյ նեստորականների մէջ ամէնից բարձր եկեղեցական պաշտօնունով մաթրանը կամ մետրոպոլիտն է, որի բնակավայրը Քուրդիստանի ամենագեղեցիկ վայրերից մէկում բարձր առապարի վերայ, մի հասարակ

փանք է միայն շրջապատուած մի քանի հովուական խորհիւթներով: Այդ փանքը, ինչպէս և շրջակայքում ապրող բրիտանականները շատ մօտ լինելով Պարսից սահմաններին, ենթակայ են քուրդերի անընդհատ յարձակումներին: որոնք իրենց կողոպուտըն անելուց յետոյ կարող են անպատիժ սահմանի միւս կողմն անցնել:

Պուստաց մի լուս կազմակերպուած միսիօնարական յանձնախումբն որ իւր գլուխ ունենալով նորագործ Իսնա եպիսկոպոսին հանդիսաւոր շուքով մուտք գործեց Թաւրիզ՝ սկսել է արդէն իւր գործունէութիւնը Պարսկաստանի նկատորականների մէջ:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆՅՑ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Նորին Վեհափառութիւնը ժամանեց Տաթև օգոստոս 12 ին, ուղեկիցների մեծ բազմութեամբ: փանքի արտաքին դրան առաջ սպասում էր մերձակայ գիւղերի հոգեւորականութիւնը: սրի գլուխն էր անցել Շուշուց ընդ առաջ եկած Արծ. Տիրայր վարդապետը: Տաթևում Նորին Սրբութիւնը զբաղուեցաւ զխաւորապէս փանքի անտեսական գրութիւնը դիտելով և կարգադրելով ինչ որ արժան է: 14-ին առաւօտեան 8 ժամին Նորին Սրբութիւնը բարեհաճեց ուղեորուել գէպի Գեօրիս: Ծանապարհը որքան անտանելի՝ այնուամենայնիւ ծերունի Հայրապետն անցաւ առանց ձանձրանալու, երբեմն ձիով և երբեմն ոտքով: Ծանապարհի կիսում Սախկալ—թուրքմանի անտառի մէջ Հալիձորցիք գիւմարեցին Վեհափառ Հայրապետին և խնդրեցին թէ և նախաձառ ընդունել: Նորին Սրբութիւնը բարեհաճեց ընդունել ժողովրդի պատրաստած նախաձայր և երկու ժամից յետոյ շարունակեց ձանապարհը: Այնուհետեւ գիւմարեցին Շինուհայր Սոթի և Բարահունջ գիւղերի բնակիչները, այր և կին մեծ բազ-

մութեամբ: Սրբ. Հայրապետն իջաւ ձիուց, ընդունեց առաջարկուած աղն ու հացը և «պահպանիչ»ով օրհնեց ամէնքին: որոնք ծունկի եկած ընդունեցին իրենց Հովուապետի օրհնութիւնը: ուղեկիցների թիւը հասաւ արդէն 200-ի: Գեօրիսից 5 վերստ տեղ ընդառաջ էր եկել տեղւոյն գաւառապետը ժողովրդեան հետ: որոնց ուղեկցութեամբ Վեհ. Հայրապետը Գեօրիս մտաւ մեծ հանգիստով: յաղթական կամար էր պատրաստուած մեծ հրապուրակի վերայ, ուր ձիուց իջաւ և ընդունեց մատուցած աղն ու հացը: Տեղացի մահմեդականների դպին մի սրտառու ճառ ասաց այդտեղ: ապա Նորին Սրբութիւնը կառք նստելով բարեհաճեց իջեանել Մանուշար բէկ Մելիք—Հուսէյնեանցի տանը: որ շքեղ կերպով զարդարուած էր թէ ներսից և թէ դրսից: Զարդարուած էին նաեւ աւանի բոլոր տները դրոշակներով, թանկագին գորգերով և ծաղիկներով բոլոր խանութները փակ էին: Գիշերը լուսաւորուած էր աւանը և հայրապետական բնակարանի առջև խոնուում էր ժողովուրդը:

14-ի առաւօտեան Նորին Սրբութիւնը ուղեորուեց գէպի Շուշի: Շուշեցիների ուղարկած կառքերով ժանապարհին ամէն տեղ գիւղացիները գիւմարում էին աղ ու հացով և օրհնութիւն ստանում: Երեկոցեան 7 ժամին Նորին Սրբութիւնը Թթու ջուր հասաւ և գիշերեց պ. Ամբրոսեանի բնակարանում: Շուշուց ընդառաջ էր եկել մեծ բազմութիւն: Վեհ. Հայրապետի ուղեկիցների բնակութեան համար վրաններ էին դրուած: Եաջորդ օրը առաւօտեան 6 ժամին Հայրապետական գնացքն ուղեորուեց գէպի Շուշի, ուր և հասաւ 8 ժամին: Քաղաքի դրան առջև գիւմարեց քաղաքագլուխը իրաւասունների հետ և մատոյց աղ և հաց: արհեստաւորները իրենց զրոշակներով էին, ժողովուրդը ծովացել էր և խօսքի ընդարձակ նշանակութեամբ, ասեղ ձգելու տեղ չկար: Հայրապետական գնացքը ստիպուած էր կանգ առնել, մինչև ոստիկանութիւնը ձանապարհ բացեց, բոլոր պառչկամբներն ու լուսամուտները լեցուած էին հանդիսատեսների բազմութեամբ: որոնք ծաղիկներ ցանկելով հայրապետական կառքի առաջ՝ ձայն էին տալիս: «կեցցէ՛ մեր Հայրիկը, կեցցէ՛ սի-